Արձանագրություն N 3

«ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Արշակունյաց 135 «03» «05» 2019թ

ժ.14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Քոչարով (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝ Է. Հարությունյան (գնահատող) Գ.Խաչատրյան (գնահատող), Ա.Շադյան, (բացող) Ն.Սաֆարյան (բացող)

Հանձնաժողովի քարտուղար՝ Նաիրա Մկրտչյանը

1. «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ս.Քոչարով)

Ընդունել ի գիտություն, որ.

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին «Սիփիէս Օիլ» ՍՊԸ 26.04.2019թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը ներկայացնելու մասին, որոնց կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:

26.04.2019թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում, որի համաձայն ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 02.05.2019թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ տրամադրվել է հանձնաժողովի անդամներին, որի գնահատման արդյունքները բերված են ստորև.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ս.Քոչարով)

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացարած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանաշման հարցման առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտի գնահատման արդյունքները:

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը			*Մասնակցի հայտի գնահատման արդյունքները
			Մասնակցի անվանումը
			«Սիփիէս Օիլ» ՍՊԸ
1	Ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին	Բավարար Անբավարար	Բավարար
2	հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն	Բավարար Անբավարար	Բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	Բավարար

Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանատվությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին
(Ս.Քոչարով)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Հանձնաժողովը որոշեց.

-«ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Սիփիէս Օիլ» ՍՊԸ –ին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին
(Ս.Քոչարով)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը

-«ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Սիփիէս Օիլ» ՍՊԸ-ին:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
(Ս.Քոչարով)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:30-ին, ք. Երևան, Արշակունյաց 135 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Սերգեյ Քոչարով
Անդամներ՝		Անի Շադյան
		Նորայր Սաֆարյան
		Գեղամ Խաչատրյան
		Էդուարդ Հարությունյան
Քարտուղար՝		Նաիրա Մկրտչյան